

Պտղատուների հիմնական վնասատուները և դրանց դեմ պայքարի մեթոդները

Վնասատուն՝ լվիճ

Վնասված մշակաբույսը՝ գործնականում բոլոր մշակաբույսերը
Ձմեռումը՝ ճյուղերի ծայրերին
Հայտնվելու ժամանակաշրջանը՝ վաղ գարնանից մինչև խոր աշուն
Քիմիական պայքարի միջոցները՝ <<Դեցիս>>, <<Կարատե>>, <<Կինմիքս>> (չի թույլատրվում օգտագործել ծաղկման շրջանում)
Կենսաբանական պայքարի միջոցները՝ <<Ֆիտովերմ>>, <<Ագրավերտին>>, մժեղներ, գատիկ
Պայքարի ժողովրդական մեթոդները՝ ասեղնատերևի /փշատերևի/ թուրմ, միզանյութի 0,7% -ոց լուծույթ



Վնասատուն՝ տերևալոր

Վնասված մշակաբույսը՝ բոլոր պտղատու մշակաբույսերը
Ձմեռումը՝ չորացած տերևների խողովակներում
Հայտնվելու ժամանակաշրջանը՝ բողբոջների բացման ժամանակ, +8...+10°C ջերմաստիճանի պայմաններում
Քիմիական պայքարի միջոցները՝ <<Դեցիս>>, <<Կարատե>>, <<Կարբոֆոս>>, <<Կինմիքս>>
Կենսաբանական պայքարի միջոցները՝ վաղ սրսկումներ՝ հանքային պարարտանյութերի խտացված լուծույթով
Պայքարի ժողովրդական մեթոդները՝ չորացած խողովակներով տերևների ձեռքով հավաքում՝ աշնանը և գարնանը



Վնասատուն՝ երկարակնճիթ բզեզ

Վնասված մշակաբույսը՝ խնձորենի, սալորենի, բալենի, մորի, արքայամորի
Ձմեռումը՝ հողում
Հայտնվելու ժամանակաշրջանը՝ կոկոնակալման ժամանակ, +6...+8°C ջերմաստիճանի պայմաններում
Քիմիական պայքարի միջոցները՝ <<Ակտելիկ>>, <<Կարբոֆոս>>, <<Ցիպերշանս>> (մինչև ծաղկելը և բերքահավաքից հետո)
Կենսաբանական պայքարի միջոցները՝ <<Ֆիտովերմ>>, <<Ագրավերտին>>
Պայքարի ժողովրդական մեթոդները՝ ձեռքով հավաքում՝ վաղ առավոտյան



Վնասատուն՝ սղոցող

Վնասված մշակաբույսը՝ խնձորենի, տանձենի, սալորենի, կոկոռչենի, հաղարջենի
Ձմեռումը՝ հողում
Հայտնվելու ժամանակաշրջանը՝
1) բողբոջները բացվելու ժամանակ,
2) սերմնարանների ձևավորման ժամանակ
Քիմիական պայքարի միջոցները՝ <<Կարատե>>
Կենսաբանական պայքարի միջոցները՝ <<Ֆիտովերմ>>, <<Ագրավերտին>>
Պայքարի ժողովրդական մեթոդները՝ վաղահաս պտուղների հավաքում

Վնասատուն՝ պտղակեր

Վնասված մշակաբույսը՝ խնձորենի, տանձենի, սալորենի
Ձմեռումը՝ կեղևի ձեղքերում
Հայտնվելու ժամանակաշրջանը՝ հունիս-օգոստոս
Քիմիական պայքարի միջոցները՝ <<Արիվո>>, <<Ցիտկոր>>, <<Ցիմբու2>>, <<Դեցիս>>
Կենսաբանական պայքարի միջոցները՝ որսագոտիներ, ֆերոպոնային թակարդներ
Պայքարի ժողովրդական մեթոդները՝ թափված պտուղների հավաքում՝ երեկոյան





Հիվանդությունը՝ մոզախկա (վիրուս)

Վնասված մշակաբույսը՝ արքայամորի, կոկոռչենի **Տարածումը և ձևառումը՝** տարածվում է մծեղների, կնճիթավոր ճպուռների միջոցով, փոխանցվում է տնկանյութի միջոցով **Հայտնվելու ժամանակաշրջանը, հիվանդության նշանները՝** ամռան առաջին կեսին տերևներն ստանում են դեղնա-կանաչավուն մոզախկայի երանգավորում **Կենսաբանական պայքարի միջոցները՝** <<Ցիրկոն>> **Պայքարի ժողովրդական մեթոդները՝** ամբողջությամբ ոչնչացնել թփերը, փոխել հողը կամ 4 տարի այդ տեղում չտնկել արքայամորի և կոկոռչենի

Հիվանդությունը՝ տերևների գանգրոտություն (սնկային հիվանդություն)

Վնասված մշակաբույսը՝ տանձենի, հաղարջենի, կոկոռչենի, մորենի **Տարածումը և ձևառումը՝** թափված տերևի վրա **Հայտնվելու ժամանակաշրջանը, հիվանդության նշանները՝** ծաղկման ժամանակ սպորները ցաքուցրիվ թռչում են /ցրվում են/, իսկ հիվանդությունն ի հայտ է գալիս ամռան վերջին՝ մանր մուգ դարչնագույն կամ սպիտակ բծերի տեսքով **Քիմիական պայքարի միջոցները՝** սրսկում պղինձ պարունակող պատրաստուկի 0,1 %- ոց լուծույթով՝ ծաղկելուց անմիջապես հետո և բերքահավաքից հետո **Կենսաբանական պայքարի միջոցները՝** <<Ֆիտոսպորին>> կամ <<Ցիրկոն>> **Պայքարի ժողովրդական մեթոդները՝** թափված տերևը կամ հեռացնել կամ ուշ աշնանը սրսկել միզանյութի լուծույթով



Հիվանդությունը՝ մոնիլիոզ (սնկային հիվանդություն)

Վնասված մշակաբույսը՝ բոլոր կորիզավորները **Տարածումը և ձևառումը՝** ճյուղերի և չորացած պտուղների վրա **Հայտնվելու ժամանակաշրջանը, հիվանդության նշանները՝** ի հայտ են գալիս վաղ գարնանը, ծաղկման ժամանակ սնկի սպորները հաստնանում են և տարածվում քամու և կազարկաների միջոցով, հատկապես խոնավ, ցուրտ եղանակին: Տերևները և ճյուղերը համարյա միաժամանակ չորանում են, այնուհետև ճյուղերին կրկին հայտնվում են տերևներ, որոնք, սակայն, արագ թափվում են, պտուղները ճաքճքում են և նեխում: **Քիմիական պայքարի միջոցները՝** 2-անգամյա սրսկում՝ մինչև ծաղկելը և դրանից անմիջապես հետո՝ պղինձ պարունակող պատրաստուկի 1%- ոց լուծույթով **Կենսաբանական պայքարի միջոցները՝** 3-անգամյա սրսկում՝ <<Ցիրկոն>> պատրաստուկով (ծաղկելուց առաջ, նոր ձևավորված սերմնաբանների վրա, բերքահավաքից հետո) **Պայքարի ժողովրդական մեթոդները՝** պտուղները չօգտագործել կոմպոստում, չորացող ճյուղերը կտրել և այրել, ցողել <<Ֆիտոսպորին>>-ով, պարբերաբար սրսկել <<Զոդոնովի սաղ>> պատրաստուկով:



Հիվանդությունը՝ ծառերի կեղևի մահացում

Վնասված մշակաբույսը՝ խնձորենի, ավել հազվադեպ՝ տանձենի **Տարածումը և ձևառումը՝** սնկային հիվանդություն է, ախտահարում է թուլացած, ուժասպառ եղած բույսերը **Հայտնվելու ժամանակաշրջանը, հիվանդության նշանները՝** կեղևն այրվում է գարնանային արևից կամ ցրտահարվում է **Քիմիական պայքարի միջոցները՝** վարդագույն գունավորում ստացած կամ շերտազատված կեղևը մաքրել մինչև առողջ փայտանյութին հասնելը, մշակել պղինձ պարունակող պատրաստուկի 3 %- ոց լուծույթով, վնասված տեղերին քսել սկիպիդար: **Կենսաբանական պայքարի միջոցները՝** աշնանը ծառերի բները սպիտակեցնել լատեքս ներկով: **Պայքարի ժողովրդական մեթոդները՝** աշնանը, սպիտակեցնելու փոխարեն, բները փաթաթել ապակեգործվածքով, հանել այդ գործվածքը՝ ձյունը հալելուց հետո, բնի պաշտպանված վերքերին քսել զմրուխտյա կանաչ /зеленка/ կամ ավելուկի շիլա:



Սույն հրատարակությանը պատրաստվել է <<Հայ կանաչք հանուն առողջության և առողջ շրջակա միջավայրի>> հասարակական կազմակերպության կողմից՝ ԿՕՍ-ների ոչնչացման միջազգային ցանցի (IPEN) ղեկավարության ներքո SAICM-ի (Քիմիական նյութերի կառավարման ռազմավարական մոտեցում) հրականացման միջազգային ծրագրի շրջանակներում: